ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-3-9-Ա

ք. Երևան 22.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի մայիսի 19-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված Գելեհեր Լիմիթիդ ընկերության (Members Hill, Brooklands Road, Weybridge, Surrey KT13 0QU, United Kingdom, GB) բողոքը «SOBRANIE SLIDE» (No20190673) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն: ԻՆչպես նաև, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված հիմքերով որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ հանդիսանում է համընդհանուր ընդունված անվանում և օգտագործվում է բազմաթիվ ընկերությունների կողմից: Ստորև նշում ենք կայքը, որտեղ երևում է «Slide» բառի օգտագործումը տվյալ դասի ապրանքների համար՝
https://nafeesonline.com/collections/cigrettes/products/benson-silver?fbclid=IwAR1G7t1-k6a6YIoEz9-Q2Q2T-QV2DIYOhvhpOHwnWmbFPVTsroNZkAWiv8,

http://www.snadnatrafika.cz/sortiment/polozka/1509-benson-&-hedges-white-slide?fbclid=IwAR2BzEBc4E-KnkDbh6xuE46NBi 3Y71mqWOJXH1ygsrFVTE3h4HMIG-mGKjQ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է հայտարարություն «SLIDE» բառի նկատմամբ բացառիկ իրավունքից հրաժարվելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «SOBRANIE SLIDE» (No20190673) ապրանքային նշանը գրանցել «SLIDE» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ